

ԼԱՎՐԵՆՏԻ ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ

Բանասիրական գիյր. դոկտոր

ՃԵՆԱՅ ԱՇԽԱՐՏԻ ԵՒ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՒՄԻ ԾԱԳՄԱՆ ՆԱՐՅԻ ՇՈՒՐՁ

Տարբեր դարերի հայ պարամագրության մեջ հիշարակություններ կան Ճենաց աշխարհի մասին: Տարաբնույթ փնդեկարվությունների առումով, ինչպես եւ սպասելի է, առանձնանում է Մովսես Խորենացին: Ներագա շարադրանքում կրկնություններից խուսափելու համար նպարակահարմար ենք գրնում Խորենացու՝ մեզ հերարքրող հարվածը ներկայացնել ամբողջական փերքով:

«Վախճանեալ Արարաշի որդոյ Սասանայ՝ թողու զթագաւորութիւն Պարսից որդոյ իրում Շապիոյ: Ի սորա աւուրս ասնն եկեալ ի Նայս նախնի ազգին Մամիկոնէից յարևելից հիւսիսականէն, ի քաջարոհմիկ եւ ի գլխաւոր աշխարհէ եւ ամենայն հիւսիսականաց ազգաց առաջին ասնմ իսկ զՃենացն, որ ունին գրոյցս այսպիսիս: Յամս կարարման կենացն Արարաշի, Արբոկ ոմն Ճեն-բակուր, որպէս ասի ի նոցա լեզուն պարի թագաւորութեան. սորա երկու դայեկորդիք, Բղղոխ եւ Մամգոն անուն կոչեցեալ, մեծ նախարարք: Եւ չարախօսեալ Բղղոխայն զՄամգոնայն՝ հրամայեաց թագաւորն Ճենաց Արբոկ սպանանել զՄամգոնն: Չոր իմացեալ Մամգոնայն՝ ոչ գայ ի կոչն արքայի, այլ փախուցեալ աղխի իւրով անկանի առ Արարաշի թագաւորն Պարսից...

Արդ թեպէր եւ ոչ րայ Շապուհ զՄամգոնն ի ձեռս փեռն իւրոյ, այլ եւ ոչ յԱրեաց երկրին թողու. բայց ամենայն աղխին իրով առաքլ. գնա իբրեւ զվարանդի առ գործակալս իւր որ ի Նայս»:

Մեջբերվող հարվածի շարունակության մեջ Խորենացին նկարագրում է Ճենաց աշխարհի որոշ մանրամասներ. «Սքանչելի է աշխարհն առարութեամբ ամենայն պրդոց, եւ գեղեցիկ բուսովք զարդարեալ, քրքմաւեր եւ սիրամարգաշար եւ բազմամերաքս, անրաւորին յամուրաց եւ հրեշից, եւ որ էշայծեմունսդ անուանեն, որ հասարակաց կերակուր ասնն զառ մեզ պարուական եւ սակաւուց ճաշակելիս՝ զփասեան եւ զպոր, եւ այլք այսպիսիք, իսկ պարուականքս առ մեզ զգեստուց եւ սակաւուց ազանելիք՝ հասարակաց նոցա է զգեստ: Եւ այս յաղագս աշխարհին Ճենաց՝:

Ճենաց աշխարհի մասին հիշարակություն կա եւ Խորենացու «Աշխարհացոյց»-ում: «Եւ է Ճենասարան ընդարձակ դաշտս բնակեալ ազգս քսանեւինն,

1 Մովսես Խորենացի, Պարմութին Նայոց, քնական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Արեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, նմանահանութիւն, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երեւան, 1991, էջ 221-223:

յորոց մին մարդակերք, առ Անձանաթ երկրաւ... ունի լերինս վեց. եւ լինի անդ դարիճենիկ եւ կասիմոն... եւ ունի հրէշ եւ մուշկ եւ սիրամարգ շար, եւ այլ հասւ պիտանիս եւ քրքումս անբաւս..., լինի ապրիշում շար: ...Յորոց արքայն ճենբակուր նսրի ի քաղաքին Սիւռա՝ որ է ի հարաւային արեւելեայ ծայրի աշխարհին» (2160-2161)²:

Ուսումնասիրողները համակարծիք չեն Ճենասարանի փեղադրման, բնակաւնարար եւ բնակիչների էթնիկական պարկանելության հարցում: Գերիշխող կարելի է համարել Ճենաց աշխարհը՝ Չինաստանը, ճեններն էլ չինացիներ լինելու վարկածը: Նարցի ճշգրտումը կարեւորվում է հայրկապես Մամիկոնյան նախարարական փոհմի չինական ծագման համապետքստում, որը փորձում են հիմնավորել նաեւ Խորենացու վկայած հայրուկ անունների միջոցով:

Մանրամասն քննելով հայկական աղբյուրների վկայությունները՝ պարմարան Ն. Սվազյանը իրավացիորեն եզրակացնում է. «Հայկական աղբյուրների ճենները, ոչ մի դեպքում չեն կարող լինել ո՛չ ճաները, եւ, առավել եւս, ո՛չ չինացիները: Այդպիսի նույնացումը անվանումների սոսկ արտաքին նմանության հետեւանք է»³: Նեղինակի կարծիքով «Ճենաց երկիրը պետք է փարածված լիներ Պարսկաստանի արեւելյան սահմաններից ոչ շար հեռու հոսող Ամու-Դարյա գետի ափերին»⁴: Այդ փարածքում չինական բնակչություն չկար, այնպեղ ապրում էին իրանական ցեղեր:

Ճենքը Չինաստանն են համարում եւ Խորենացու պարմության թարգմանիչները՝ Մ. Էմինը ծանոթագրում է тченк, ճենք, китайцы, китай⁵, Խ. Սյրեփանեն թարգմանում է *Ճենասարան*, ճենների ազգ՝ ծանոթագրելով, որ «թէ՛ ճենք անունը, եւ թէ երկրի նկարագրությունը ցոյց են տալիս, որ այժմեան չինացիներն եւ Չինաստանն է նշանակում»⁶, Գ. Սարգսյանը նույնպես այդ կարծիքին է՝ գրելով страна ченов – Китай, чены-китайцы⁷.

Այս վարկածը մերժելի պետք է համարել: Փորձենք հիմնավորել պրամարանական, պարմական, ապա եւ, հայրկապես, լեզվաբանական նոր փաստարկներով:

2 «Աշխարհացոյցի» հեղինակի հարցում փարակարծություններ կան: Ոմանք այդ գործի հեղինակ են համարում Շիրակացուն, սակայն զանազան կարգի փաստերը հաստատում են, որ հեղինակը Խորենացին է, թեկն կան հետագա՝ ուշ շրջանից հավելումներ: «Աշխարհացոյց»-ի երեք հրատարակությունները զեւրեղված են «Մարենագիրք Նայոց» Բ. հատորում, Անթիլիաս-Լիբանան, 2003: Այդ հրատարակությունների մեզ հեղաբրբրող հաւաքածում էական փարբերություններ չկան:

3 Ն. Սվազյան, ճեները եւ «Ճենաց աշխարհը» ըստ հայկական աղբյուրների. «Պարմարանասիրական հանդես», 1976, թ. 4, էջ 207:

4 Անդ, էջ 208:

5 «История Армении Моисея Хоренского», новый перевод Н. О. Эмина, Москва, 1893, ծան. 315:

6 «Մովսէս Խորենացու Նայկական պարմութիւն», աշխարհարար թարգմանեց եւ լուսարանեց Խորեն ծայրագոյն վարդապետ Սյրեփանէ, Ս. Պետրեբուրգ, 1889, էջ 212-213, ծան. 479:

7 Տէն *Мовсес Хоренаци*, История Армении, перевод с древнеармянского языка, введении и примечания Гагика Саркисяна, Е., 1990, էջ 252, ծան. 527:

Չինաստանի հետ Առաջավոր Ասիայի և ապա Եւրոպայի կապը սկզբնավորվել է, այսպես կոչված «մեդաքսի ճանապարհի» շնորհիվ, որը գործում էր մ.թ.ա. Բ. դ. մինչև մ.թ. Է. դ. Ե.-Է. դդ. «մեդաքսի ճանապարհի զգալի մասը, պարսկական-սողդիական վաճառականների ձեռքում էր»⁸: Կարելի է ենթադրել, որ դրանից առաջ էլ չինական փարրի առկայությունը չնչին էր (կամ գուցե չկար), որովհետև չինարենը Առաջավոր Ասիայի (և Եւրոպայի) հետ առևտրական հարաբերություններում լուրջ դժվարություններ կստեղծեր: Նայ մայրենագիրները չեն հիշարկում նաև չինացիների ինքնանվանումը՝ *хань*⁹: Սա էլ Չինաստանին ծանոթ չլինելու փաստ է: «Աշխարհացոյց»-ում փարբեր երկրների նկարագրության ժամանակ շեշտվում են բնակիչների կամ բնակչության որևէ խմբի արտառոց վարք ու բարքը, սովորությունները:

Ճեները չինացիներ լինելու դեպքում սպասելի է, որ կխոսվեր նրանց արտաքին տեսքի, դիմագծերի, յուրահարկությունների մասին:

Խոսք չկա նաև չինացիների արտառոց ուրելիքների մասին: Նրանք, ինչպես ասում են, ուրում են այն ամենը ինչ կա երկնքում, երկրի վրա և գետնի վրա, այդ թվում՝ ճանճեր, միջատներ, որդեր...: Ոչ միայն չի նշվում այդ երևույթը, այլև «Պարսմության» մեջ Խորենացին, ընդհակառակը, նրանց կերակուրները համարում է «պարուական և սակաւուց ճաշակելիս»:

Խոսք չկա նաև չինարենի մասին, որն իր բառակազմական և լեզվաքերականական դրսևորումներով էապես փարբերվում է Առաջավոր Ասիայի նաև հայերի ու եւրոպացիների լեզուներին¹⁰:

«Աշխարհացոյց»-ի մեջ Ճենաց երկրի բուսական և կենդանական աշխարհին վերաբերող թվարկումների շարքում ոչ մի չինարեն բառ չկա, գերիշխող են իրանական լեզուների բառերը՝ *դարիճենիկ, հոշիբուակ, բուճենիկ, հրէշ, մուշկ, սիրամարգ, քրքում...* (էջ 175). մյուս հրապարակություններում չնչին փարբերություններ կան: Ն. Աճառյանի կարծիքով *սիրամարգ* բառը ծագել է *սինամարգ* ձևից և փոխառյալ է իրանական լեզուներից (տե՛ս Արմ. Սիրամարգ բառաձևովածը): Մարգ բաղադրիչը ակնհայտորեն իրանական է, իսկ սին-ը հավանորեն *Չին*(ական) բառն է: Այս փաստն էլ իր հերթին վկայում է, որ միջին իրանական լեզուներում (նաև ավելի վաղ) Չինաստանի անվանումը *ճեն* արմարով չէր: *Սին* արմարը պահպանվել է նաև հայկական ժողովրդական հեքիաթներում՝ Սինամ թագավորի և Սինամ հավքի սյուժեներում, որոնցում Չինաստանը ներկայանում է որպես կախարդական աշխարհի խորհրդանիշ¹¹:

8 «Նայկական սովերական հանրագիտարան», հ. 7, Երևան, 1981, էջ 485:

9 Բնիքնավանման մասին տե՛ս «Большая Советская Энциклопедия», 1973, т. 23, էջ 422:

10 Նին չինարենի վանկը, հետեաբար և արքասանությունը զգալիորեն փարբերվում էր հնդեւրոպական լեզուների բառակազմական և հնչական իրողություններից. վանկի կազմում, որոշ բաղաձայններ թերեւս կարարում էին նախաձանցի կամ վերջաձանցի դեր, իսկ յուրաքանչյուր վանկ կարող էր ունենալ 2-4 իմաստազարիչ դեր: Այս և այլ հարկանիշներ, որոնք նաև հաղորդակցման դժվարություններ են ստեղծում, մեր պարմագրության մեջ չեն նշվում:

11 Տե՛ս Ն. Վարդանյան, Չինաստանը կախարդական աշխարհի խորհրդանիշ, «Ոսկե Դիվան» հեքիա-

«Պարմության» մեջ եզակի վկայությամբ հանդիպող *էշայծեսանն* էլ իրան. *xarbusz*-ի պարզեցումն է. *xar* «էշ», *buz* «այծ»¹²:

Մեզ հետաքրքրող հապավածներում որոշ անձնանունների չինական ծագում վերագրելը նույնպես մերժելի է:

Գ. Սարգսյանը նկատում է, որ «Մամիկոնեան» փոհմանվան սրուգաբանությունը եռասարիճան է. «Մամիկոնեանը սրուգաբանվում է «մամզոնեանով», սա էլ՝ «մամզոնով»: Անանունի փարբերակով այն սրուգաբանված է զույգ Մամիկ և Կոնակ անուններով: Մամիկ անունը, եթե հետևենք Մարքվարփին, հիշարակում է *դեռես Տիգրան Մեծի կապակցությամբ* Ապպիանոսը»¹³:

Մամզոն անունը հիշարակվում է նաև Խորենացու Պարմության երկրորդ գրքի ԶԴ. գլխում. «Գնաց Մամզոն ամենայն աղխին իրով գեղողմամբ Տարոնոյ... և կարգէ (Տրդար) գնա նախարար ... անուանելով անուն իր Մամզոնեան» (228-229):

Բակուր անձնանվան «չինա-թյուրքական» ծագման փաստարկները նույնպես համոզիչ չեն: Ոմանք բառը բացատրում են «որպես թյուրքական *fağtūr*, չինարեն *Tsen-tze* «արեգակի որդի» բառի թարգմանության հայացված ձև»¹⁴: Ավելի հավանական է բառի իրանական ծագումը *bāg* «ասրված» և *puhr* > *puh* «որդի»: Սպ. Մալխասյանը, ընդունելով վերոհիշյալ սրուգաբանությունը նշում է. «Ճեն-Բակուր նշանակում է Ճենաց (Չինաց) Բակուր»¹⁵ (անշուշտ, ավելորդ է փակագծերում առկա *չինաց* լրացուցիչ մեկնությունը):

Այնքան էլ փրամաբանական չէ, որ Չինաստանից եկած մեկի անունը այդքան շուր և շար փարածվեր Նայաստանում, նաև հայերի միջոցով՝ Վրաստանում: Անձնանունների բառարանում նշվում են մի շարք Բակուրներ: Այդ անունը գործածված է եղել մ.թ.ա Ա. դարից:

Գ. Արզարյանը, անդրադառնալով Ճենաց դեսպանի հետ ունեցած գրույցի վկայությանը, նկատում է, որ «Ճենացիները (եթե դրանք իրոք չինացիներ են), դեսպանի Նայաստան եկած ժամանակներում, չէին կարող իրենց լեզվով, այսինքն՝ միջին չինարենով ճշգրիտ արտասանել ո՛չ Արտավան, ո՛չ Խոսրով, և ոչ էլ գրույցում հանդիպող մյուս այն անունները, որոնց կազմում *ր* հնչյուն կա»¹⁶:

Թագիբական հանդես, պրակ 3, 2011, էջ 89:

12 Ն. Աճառյան, Նայերեն արմատական բառարան, հ. II, Երևան, 1973 (այսուհետև՝ Արմ.), խաբբուզ բառահոլովածը: Խաբբուզի թերևս միակ վկայությունը Մ. Գրքում է. «Ջեղջերու և զայծեսան և զգոմէշ և զխաբբուզ և զայծքաղ» (Օր., ԺԴ., 5):

13 Գ. Սարգսյան, Նաբուկ անունների սրուգաբանությունը Մովսես Խորենացու պարմության մեջ («Պարմագիտական հետազոտություններ», Երևան, 2006., էջ 102): Ընդգծ. Լ. Ն.

14 Տեն Ն. Մվազյան, նշվ. աշխ., էջ 209:

15 Մովսես Խորենացի, Նայոց պարմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Սպ. Մալխասյանի, Երևան, 1951, էջ 504, ծան. 222: Ն. Աճառյանը նույնպես ընդունում է Բակուր բառի իրանական ծագումը՝ դարձյալ հավելելով՝ «այս անունն էին կրում Չինաց թագավորները հնում» (Ն. Աճառյան, Նայոց անձնանունների բառարան, հ. Ա., Երևան, 1942, էջ 368):

16 Գ. Արզարյան, Մամիկոնյանների գրույցի հնագույն աղբյուրը հայ մատենագրության մեջ («Բանբեր Մարենադարանի», թ. 7, 1964, էջ 247): Ըստ Գ. Արզարյանի՝ ճենաց դեսպանի հետ գրուցողը և Մամիկոն-

Ն. Աճառյանը *Կոռնակ* անձնանվան ծագումը համարում է անհայտ, նշելով, որ նա չինացի նախարար էր, «որդի Կառնամի. իր Մամիկոն եղբոր հետ փախավ Նայասարան Մեծն Խոսրովի ժամանակ», սրանցից սկսվեց Մամիկոնյան փոհմը¹⁷:

Այսպես դարձյալ շեշտվում է չինական ծագումը, բայց կարևոր փեղեկություն է նրանց՝ Նայասարան գալու ժամանակաշրջանի վերաբերյալ:

Կոռնակ անձնանունը Խորենացին հիշատակում է I գրքի ԻԲ. եւ II գրքի ՆԹ. գլուխներում: Ն. Աճառյանի կարծիքով՝ «Խորենացու հիշատակությունից պարզ չէ, թե ով է» (ն.պ., էջ 647): Մ. Աբելյանը Կոռնակներից մեկին համարում է Նայոց թագավոր, մյուսին՝ Պարսից գորավար¹⁸:

Ակնհայտ է, որ նշված անձնավորությունները չինացիներ չեն, բնականաբար անուններն էլ չինարեն չեն: Դառնանք *Բդդդիս* անձնավանդ: Սր. Մալխասյանը բառը առնչում է մոնղոլերեն Բոդդիխան-ի հետ, որը չինական թագավորների փրվող փախուցիկ է¹⁹: Ն. Աճառյանի կարծիքով «Անհանարին է Ե. դարում ապրող Խորենացու մեջ գրանցված լինելով»: Նա կարդացվում է միայն *Բդդդիս*²⁰:

Մեկ դիտարկում եւս. բազմաթիվ լեզուներում Չինաստան բառի արմատի ծայնավորը ի է. հմմտ. անգլ. china, գերմ. china, իրալ. cina, պրս. չինի (չինական), ռուս. китай, ուլդուրերն kytā», հին թյուրք. Qytan...: (Քիթանները փրկված սամանջուրական ցեղախմբեր էին, որոնք Ժ. դ. նվաճեցին Չինաստանը)²¹:

Չին(աստանը) եթե լինել է. դ. հայերենում վկայված *Ճենքը*, *Ճենաց աշխարհը*, ապա վերջինները պիրի ունենալին *Ճինք կամ *Ճէնք, *Ճէնաց գրությունը, քանի որ գործում է Է-ի հնչյունափոխությունը եւ ոչ թե՛ Է-ի (հմմտ. վեմ-վիմի, փեր-փիրոջ, սեր-սիրոյ... եւ այլն):

Վերոհիշյալ եւ այլ ուսումնասիրողների կողմից բերված փաստարկները թույլ են փայլա եզրակացնելու, որ Ե. դ. վկայված *Ճենք*-ը Չինաստան չէ, եւ բնականաբար Մամիկոնյան նշանավոր փոհմին չինական ծագում վերագրելը մերժելի է:

Ճենքը, ամենայն հավանականությամբ պարթևներին ցեղակից ժողովուրդներ էին, հայերի հետ հեռավոր ծագումնաբանական կապով եւ, որ պակաս կարևոր չէ, լեզվական, հարկապես, բառապաշարային շարք ընդհանրություններով:

Նայերենում *չին* անվանումը վկայված է ուշ շրջանից՝ ՆՏԲ-ի փվյալներով

յանների գրույցը գրանցողը եղել է Ագաթանգեղոսը (ն.պ., էջ 246):

17 Ն. Աճառյան, Նայոց անձնանունների բառարան, հ. I, 1944., էջ 646:

18 Տե՛ս «Պարմություն Նայոց»-ում բերված անձնանունների ցանկը, էջ 380:

19 Տե՛ս Մովսես Խորենացի, Նայոց Պարմություն, աշխարհաբար թարգմ. եւ մեկնաբանությունները Սր. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 504, ծան. 222:

20 Ն. Աճառյան, Նայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան., 1979, էջ 653:

21 Китай բառի մասին փնտ. Մ. Բасмер, Этимологический словарь русского языка, հ. 2, М., 1986, էջ 240-241:

ԺԳ. դարից: Նիշյալ բառարանի վասարակաշարի հեղինակները նույնպես *Ճենիք*-ը Չինաստանը չեն համարում: Բառարանը Խորենացու վկայած Ճենագգեայ, Ճենագն մեկնում է «Որ է յազգէ Ճենաց», իսկ Վարդան պարմիչի՝ «Օրարադէմ եւ ալլալեզու շարժել *ի չին* եւ *ի մասին* աշխարհէ» օրինակի *Չին* ճշգրտորեն մեկնում «Աշխարհ եւ ազգ քինաց կամ սինեացոց»²²:

РЕЗЮМЕ

В “Истории Армении” Мовсеса Хоренаци происхождение княжеского рода Мамиконянов связывается с именем некоего Мамгуна, прибывшего в Армению из “страны Ченов”. В “Географии” того же автора описываются некоторые ее особенности. По мнению большинства исследователей, “страна Ченов” – Китай, а сами “чены” – китайцы. Эта гипотеза опровергается в статье в результате анализа ряда фактов, среди которых можно выделить следующие:

-Среди названий растений и животных “страны Ченов” нет ни одного китайского слова. Личные имена “Мамгун” и “Бакур”, приводимые автором, также не являются китайскими по происхождению.

-Автор подробно описывает географическое положение, быт, обычаи знакомых ему стран. В описании “страны Ченов”, как и в остальных, нет ни одного факта, характерного для Китая и китайцев.

-Если “Ճենիք”, как ошибочно считается, это “Китай”, то мы должны были бы иметь словоформу “Ճէնիք”:

SUMMARY

In Movses Khorenatsi's “Armenian history” the origin of Mamikonyan's princely House is connected with the name of Mamgun, who had come to Armenia from the Ճենուց (C'enac') country.

In the „Geography,, of the same author are described some specificities of the country. By the opinion of the most researchers the country of the Ճենուց is China and Ճենիք are cheenes.

In the article basing on different facts and arguments this hypothesis is denied.

-There is no chinese word in the line of plant names and animal names. The names “Mamgun” and “Bakur” are not Chinese too.

-The geographical location, the lifestyle of people and extraordinary traditions are described very well in the part about other countries which are familiar to author. There is no fact which is typical to China in the description of Ճենուց world.

-If «Ճենաստան» would the same “China” it had to be written «Ճէնիք».

²² Տե՛ս ՆՇԲ, Ճենագգեայ, Ճենագն, զին բառառողովածները, հ. II, էջ 179, 576: